AMERIABANK

158313

O.AB.100.3LS.0.6.4110.15
30.11.2015

Ինֆորմացիայի Ազատության
Կենտրոն ՀԿ իրավաբան պարոն
Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն հասարակական կազմակերպության անվամբ, իրավաբան Գևորգ Հայրապետյանի ստորագրությամբ հաստատված2015թ. նոյեմբերի 11-ի գրությամբ, <Ամերիաբանկ> ՓԲԸ ներկայացվել է հարցում, որով պահանջվում է տրամադրել տեղեկություններ Բանկի կողմից իրականացվող տեսագրման և ձայնագրման իրավական հիմքերի մասին:

Ցանկանում ենք տեղեկացնել, որ հայցվող տեղեկությունների տրամադրման մասով Բանկի համար հիմք չեն կարող հանդիսանալ Ձեր կողմից վկայակոչված օրենսդրական հիմնավորումները, դրանք են՝ Սահմանադրության 27 և 27.1 և *<Տեղեկատվության ազատության մասին>* ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածները:

Մասնավորապես, Օրենքը չի կիրառվում առևտրային բանկերի նկատմամբ, քանի որ Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասն ուղղակի սահմանում է. <Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա>:

Մանրամասնելով, հարկ ենք համարում նշել, որ Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների համաձայն.

- յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու **տեղեկատվություն տնօրինողին** և ստանալու այդ տեղեկությունը:
- **տեղեկատվություն տնօրինող** է հանդիսանում՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև **հանրային նշանակության կազմակերպություններ** և դրանց պաշտոնատար անձինք:

"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ
ՀՀ. ք.Երևան, 0015
Գ. Լուսավորիչ փող. 9
Հ.՝ (374 10) 56 11 11
www.ameriabank.am
info@ameriabank.am

HERE AND BEYOND

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից (1915-2015)
www.armeniangenocide100.org

- **հանրային նշանակության կազմակերպություն** է հանդիսանում ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ՝ իրավաբանական անձի անունից առանց լիազորագրի կարող է հանդես գալ տվյալ իրավաբանական անձի ղեկավարը (գործադիր մարմինը) կամ համապատասխան պատշաճ լիազորություններ ունեցող անձը:

Հարգանքով՝

Տնօրինության նախագահ-
գլխավոր տնօրենի ժ/պ՝ Տիգրան Զրբաշյան

Կատարող՝ Հրաչյա Մարանգուլյան
Հեռ. 56 11 11 /ներքին՝ 0321/